ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՌԱԿՈՂՄ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՄՇՏԱԿԱՆ ՓՈԽԱՐԻՆՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 04 հունվարի 2021 թվական

Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և Հայաստանի գործատուների հանրապետական միության միջև 2020 թվականի հոկտեմբերի 5-ին ստորագրված Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 5-րդ բաժնին համապատասխան՝ ձևավորել Հանրապետական եռակողմ հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) և հաստատել Հանձնաժողովի անդամներին մշտական փոխարինողների ցուցակը՝ հետևյալ կազմով.

Նարեկ Մկրտչյան	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի պաշտոնակատարի պարտականությունները կատարող (Պայմանագրի գործողության առաջին տարում ռոտացիոն սկզբունքով նախագահություն իրականացնող)
Ռուբեն Սարգսյան	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ (մշտական փոխարինող)
Վահե Դանիելյան	Արդարադատության նախարարի տեղակալ (Հանձնաժողովի անդամ)

Անահիտ Անտոնյան	Արդարադատության նախարարության իրավական ապահովման վարչության պետ (մշտական փոխարինող)
Լենա Նանուշյան	Առողջապահության նախարարի առաջին տեղակալ (Հանձնաժողովի անդամ)
Քրիստինա Գյուրջյան	Առողջապահության նախարարության անձնակազմի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար (մշտական փոխարինող)
Ավագ Ավանեսյան	Էկոնոմիկայի նախարարի տեղակալ (Հանձնաժողովի անդամ)
Արմեն Եգանյան	Էկոնոմիկայի նախարարության արդյունաբերության զարգացման վարչության պետ (մշտական փոխարինող)
Ժաննա Անդրեասյան	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ (Հանձնաժողովի անդամ)

Արտակ Աղբալյան	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչության պետ (մշտական փոխարինող)
Գագիկ Մակարյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ (Պայմանագրի գործողության երկրորդ տարում ռոտացիոն սկզբունքով նախագահություն իրականացնող)
Սուրեն Չիբուխչյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության խորհրդի անդամ, «ԱՐՄԵՆՊԱԿ» տարա, փաթեթավորման և պոլիգրաֆիական արտադրանք արտադրողների և սպառողների իրավաբանական անձանց միության նախագահ (մշտական փոխարինող)
Միհր Մարկոսյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության խորհրդի անդամ, «Երևանի կապի միջոցների գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն (Հանձնաժողովի անդամ)
Արտավազդ Թադևոսյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության անդամ, «ԻՆՎի Կաբել» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ

(մշտական փոխարինող)

Ժաննա Սիմոնյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության անդամ, «Կոնցեռն Դիալոգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործընկեր-փաստաբան (Հանձնաժողովի անդամ)
Արթուր Հովհաննիսյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության անդամ, «Կոնցեռն Դիալոգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործընկեր-փաստաբան (մշտական փոխարինող)
Վահագն Համբարձումյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության խորհրդի անդամ, Հայաստանի ՓՄՁ հաշվապահների ասոցիացիայի նախագահ (Հանձնաժողովի անդամ)
Տիգրան Շահբազյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության անդամ, Հայաստանի ՓՄՁ հաշվապահների ասոցիացիայի նախագահի տեղակալ (մշտական փոխարինող)

Թադևոս Ավետիսյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության գործընկեր, «Հրայր Մարուխեան» հիմնադրամի ծրագրերի համակարգող (Հանձնաժողովի անդամ)
Գոհար Մկոյան	«Սոցիալական ձեռներեցների դպրոց»-ի հիմնադիր տնօրեն (մշտական փոխարինող)
Բորիս Խարատյան	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի տեղակալ (Պայմանագրի գործողության երրորդ տարում ռոտացիոն սկզբունքով նախագահություն իրականացնող)
Խաչիկ Առաքելյան	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի տեղակալ (մշտական փոխարինող)
Համլետ Դանիելյան	Հայաստանի արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ (Հանձնաժողովի անդամ)
Սրապիոն Առաքելյան	Հայաստանի թեթև արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ (մշտական փոխարինող)

Ժանետա Թորոսյան	Հայաստանի մշակույթի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ (Հանձնաժողովի անդամ)
Գայանե Արմաղանովա	Հայաստանի առողջապահության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ (մշտական փոխարինող)
Շմավոն Մկրտչյան	Հայաստանի առևտրի, հասարակական սննդի, սպառկոոպերացիայի և ձեռներեցության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ (Հանձնաժողովի անդամ)
Հասմիկ Ջիանգիրյան	Հայաստանի Հանրապետության ագրոարդյունաբերական համակարգի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ (մշտական փոխարինող)
Անահիտ Ասատրյան	Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հանրային ծառայությունների աշխատողների արհեստակցական

կազմակերպությունների ճյուղային հանրապետական
միության նախագահ
(Հանձնաժողովի անդամ)

Լաուրա Հակոբյան — Հայաստանի բանկերի և ֆինանսավարկային կազմակերպությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
(մշտական փոխարինող)

Հայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնակատար	**Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ**	**Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ**
Ն. ՓԱՇԻՆՅԱՆ	**Է. ԹՈՒՄԱՍՅԱՆ**	**Գ. ՄԱԿԱՐՅԱՆ**